600.0201.05.06.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հունիսի 2019 թվականի №201Ա

ք. Երևան

«ԱՆԻ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ №0322 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՖԵՆՀԱԼ», «ԷՐՍՏԵԴ» և «ԼԱՅԹԷԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (այսուհետ՝ Դիմողներ) 2019 թվականի մարտի 26-ին դիմել են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքով «Անի» բաց բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) Հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 15-ի №375Ա որոշմամբ տրամադրված «Զրաձոր» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0322 լիցենզիայի (այսուհետ՝ №0322 լիցենզիա) գործողության դադարեցման խնդրանքով՝ հայտնելով, որ լիցենզիայի տրամադրման համար Ընկերության կողմից ներկայացվել են կեղծ և խեղաթյուրված փաստաթղթեր, մասնավորապես՝

- №0322 լիցենզիան ստանալու համար Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված շինարարության ավարտը հավաստող փաստաթուղթը խեղաթյուրված է: Ընկերությունը չի կատարել կայանի կառուցման նախագծով նախատեսված շինմոնտաժային աշխատանքների 50 տոկոսից ավելին, իսկ որոշ աշխատանքներ ընդհանրապես չեն կատարվել, մասնավորապես՝ չի ապահովվել Աջափնյա ջրանցքի բետոնե հատվածի ծածկումը երկաթբետոնյա սալերով (1040 հատ, ջրանցքի կողային երկարություններով՝ 2400 գմ)՝ երկաթբետոնյա կոնստրուկցիաներով, չի վերազինել դյուկերը,

- Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հունվարի 30-ի №4 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) №2 հավելվածի՝ էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր Հանձնաժողով ներկայացնել ջրատարի վարձակալման պայմանագիր կամ ջրատարին միացման թույլտվություն, որը չունի և չի ներկայացրել, իսկ ներկայացված պայմանագրերը՝ կնքված «Շիրակ» ՋՕԸ-ի հետ, ոչ իրավաչափ են և անվավեր, քանի որ ՋՕԸ-ն նման պայմանագիր կնքելու իրավասություն չունի,
- Ընկերությունը Կայանի կառուցման լիցենզիան ստացել է 2005 թվականի փետրվարի 7-ին, երբ ունեցել է ջրօգտագործման վավեր թույլտվություն, սակայն հետագայում Հանձնաժողովը երկարաձգել է Կայանի կառուցման լիցենզիայի գործողության ժամկետը և տրամադրել շահագործման լիցենզիա՝ առանց հաշվի առնելու, որ Ընկերության ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետն ավարտվել է և չի երկարաձգվել,

բ) Դիմողների 2019 թվականի մարտի 26-ի գրության հիման վրա, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, հարուցվել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Դիմողները և Ընկերությունը ծանուցվել են Հանձնաժողովի 2019 թվականի մարտի 28-ի №ԱԲ-614ի գրությամբ,

գ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2019 թվականի ապրիլի 8-ի №04.019 գրությամբ հայտնել է, որ Դիմողների պահանջն անհիմն է և ենթակա մերժման, քանի որ՝

- Ընկերությունը №0322 լիցենզիայի ստացման ժամանակ ներկայացրել է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, որոնք կեղծ չեն և համապատասխանում են իրականությանը,
- Կարգի համաձայն նախագծային փաստաթղթեր ներկայացնելու պահանջ սահմանված չի եղել,
- Դիմողները իրենց բողոքով վիճարկում են №0322 լիցենզիան, որի տրամադրման համար վերջիններիս կողմից վիճարկվող ջրատարի վարձակալման պայմանագիր կամ ջրատարին միացման թույլտվություն և ջրօգտագործման թույլտվություն չի պահանջվել,

ուստի նշված փաստաթղթերի իրավաչափության քննարկումը վիճելի իրավահարաբերության համատեքստում որևէ իրավական նշանակություն չունի: Նշված փաստաթղթերը պահանջվել են Կայանի կառուցման լիցենզիայի տրամադրման համար, որը, սակայն, ևս տրամադրվել է լիցենզիայի տրամադրման պահին գործող իրավակարգավորումների համաձայն, իսկ Ընկերությունը Կայանի կառուցման լիցենզիայի գործողության ողջ ժամանակահատվածում ունեցել է ջրօգտագործման թույլտվություն,

դ) Դիմողները վարչական վարույթի շրջանակում Հանձնաժողով ներկայացված 2019 թվականի ապրիլի 4-ի, 15-ի, մայիսի 2-ի և 20-ի գրություններով, ըստ էության, պնդել են իրենց նախորդ գրություններով հայտնած դիրքորոշումը՝ ներկայացնելով լրացուցիչ փաստարկներ: Վերջիններս, մասնավորապես, կրկին անդրադարձել են Ընկերության ջրօգտագործման թույլտվության, համապատասխան ջրատարից օգտվելու իրավունքը հավաստող պայմանագրի իրավաչափությանը, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություններին, ինչպես նաև հայտնել են, որ որպես Կայանի շինարարության շահագործման փաստագրման ակտ, Ընկերության կողմից ներկայացվել է Ջրաձոր համայնքի ղեկավարի կողմից վավերացված ակտը, որը կարող էր վերաբերել Կայանի շենքին՝ իր ենթակառուցվածքներով, և ճնշումային խողովակին, մինչդեռ հիդրոկառույցի՝ «Աջափնյա» ջրանցքի հիմնական հատվածը գտնվում է ոչ թե նախկին Ջրաձոր, այլ նախկին Ամասիա համայնքի վարչական տարածքում,

ե) Հանձնաժողովը Դիմողների գրությունները՝ կից փաստաթղթերով (ի լրումն Հանձնաժողովի 2019 թվականի մարտի 21-ի №ՄՍ/2.3-71/431-19 գրության, որով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն են ուղարկվել Դիմողների 2019 թվականի մարտի 6-ի, 12-ի, 14-ի և 18-ի գրությունները՝ Ընկերության ապօրինի գործունեության և փաստաթղթերի կեղծման վերաբերյալ) 2019 թվականի ապրիլի 16-ի №ՄՍ/2.3-71/614-19 գրությամբ ուղարկել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն՝ հաշվի առնելով, որ №0322 լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած փաստաթղթերի կեղծ լինելու գնահատումը դուրս է Հանձնաժողովի իրավասությունների շրջանակից, և այդ հանգամանքը ենթակա է գնահատման համապատասխան քրեական գործի շրջանակում: Նույն գրությամբ Հանձնաժողովը խնդրել է տեղեկատվություն տրամադրել իր 2019 թվականի մարտի 21-ի №ՄՍ/2.3-71/431-19 գրությամբ ներկայացված հաղորդման հիման վրա ընթացող քննության ընթացքի վերաբերյալ,

զ) վարչական վարույթի ժամկետը 10 օրով երկարաձգվել է՝ հաշվի առնելով, որ համապատասխան հաղորդման ընթացքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունից որևէ տեղեկատվություն չի ստացվել, ինչի մասին վարույթի մասնակիցները տեղեկացվել են Հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 23-ի №ԱԲ-824ի գրությամբ, որով վերջիններից ևս պահանջվել է առկայության դեպքում տեղեկատվություն ներկայացնել համապատասխան քննության ընթացքի վերաբերյալ,

է) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը 2019 թվականի ապրիլի 23-ին Հանձնաժողով մուտքագրված 2019 թվականի ապրիլի 22-ի №12/26(4)-19 գրությամբ տեղեկացրել է, որ Հանձնաժողովի 2019 թվականի մարտի 21-ի №ՄՍ/2.3-71/431-19 և 2019 թվականի ապրիլի 16-ի №ՄՍ/2.3-71/614-19 գրություններով ներկայացված նյութերն ուղարկվել են Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչություն՝ դրանցում նշված հանգամանքները արդեն իսկ հարուցված №61211918 քրեական գործի քննության ընթացքում ստուգելու համար, իսկ Կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու գործընթացի օրինականության վերաբերյալ հարցերը համարվում են քրեական գործով քննության առարկա,

ը) Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ Դիմողների ներկայացրած Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի սույն թվականի ապրիլի 11-ի գրության համաձայն՝ Կայանի կողմից օգտագործվող թունելից դուրս եկող մոտ 900մ երկարությամբ դյուկերը, 1200 գ/ծ մետր բաց ջրանցքը գտնվել են նախկին Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի տարածքում, 2019 թվականի մայիսի 6-ի №ԱԲ-945ի և մայիսի 7-ի №ԱԲ/2.3/761-19 գրություններով փոխօգնության կարգով դիմել է Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահին՝ խնդրելով հայտնել՝ արդյոք Կայանը շահագործման ընդունող հանձնաժողովի 2009 թվականի մայիսի 27-ի ակտով և Ջրաձոր համայնքի ղեկավարի 2009 թվականի հունիսի 2-ի շինարարության շահագործման փաստագրման ակտով հավաստվել է Կայանի կառուցման նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների, այդ թվում՝ ջրանցքի բետոնե հատվածի երկաթբետոնյա սալերով ծածկման և դյուկերի վերազինման կատարման փաստը, թե ոչ: Նշվածը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 2-րդ մասը, 30 օրով երկարաձգել է վարչական վարույթի ժամկետը.

թ) Դիմողների 2019 թվականի մայիսի 13-ի գրությամբ Հանձնաժողով ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի 2019 թվականի մայիսի 13-ի գրության համաձայն՝ ըստ ներկայացված փաստաթղթերի՝ Կայանը կառուցապատող Ընկերության կողմից կառուցվել է 2001-2009 թվականներին՝ ընդհատումներով: Կառուցապատման համար հիմք է հանդիսացել Ջրաձորի գյուղապետի կողմից 2001 թվականի օգոստոսի 4-ին տրված №001 շինարարության թույլտվությունը: Համապատասխան փաստաթղթերի համաձայն՝ Կայանը կառուցվել է Ջրաձոր գյուղի վարչական տարածքում: «Հիդրոէներգանախագիծ» փակ բաժնետիրական ընկերության 2006 թվականի հուլիսի 1-ի №22 պայմանագրի համաձայն՝ վերջինս իրականացրել է միայն Կայանի շենքի տեխնիկական հսկողությունը, ինչպես նաև ջրընդունիչ, ջրատար և մոտեցնող ջրանցք կառույցների հեղինակային հսկողությունը: Ըստ ձեռք բերված տեղեկությունների՝ կառուցապատողի կողմից ընդունող հանձնաժողովին ներկայացվել են ոչ թե նախագծի կազմված ալբոմներ, այլ առանձին գծագրերի թերթեր, որոնց վրա չեն եղել փորձաքննություն իրականացնող մարմնի նշումները, և որոնց ցանկում բացակայել են «Աջափնյա» ջրանցքի ու դյուկերի վերակառուցման և վերազինման գծագրերը: Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 11-ի NO-25/154-19 գրության համաձայն՝ Կայանի կողմից օգտագործվող ջրանցքը և դյուկերը գտնվել են նախկին Ամասիա բնակավայրի տարածքում, հետևաբար այդ տարածքում որևէ շինարարական աշխատանքներ իրականացնելու համար, համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի՝ անհրաժեշտ էր Ամասիայի գյուղապետի կողմից տրվող շինարարության թույլտվություն, ինչը չի տրվել: Նշվածը վկայում է այն մասին, որ Կայանի շահագործման ընդունող հանձնաժողովի և ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտերը տրվել են միայն շինարարության թույլտվությամբ նախատեսված՝ Ջրաձորի վարչական տարածքում գտնվող կառույցների համար և չէին կարող ընդգրկել այլ համայնքի՝ տվյալ դեպքում Ամասիայի տարածքում իրականացված որևէ շինարարական աշխատանք:

«Հիդրոէներգանախագիծ» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի ապրիլի 8-ի №36 գրությունում նշվում է, որ ընդունման ժամանակ ոռոգման ջրանցքի բաց հատվածը ծածկված է եղել սալերով՝ գրունտի լցոնմամբ, սակայն այդ աշխատանքներն իրականացնելու համար Ամասիայի գյուղապետի կողմից շինարարության թույլտվություն չի տրվել, հետևաբար չէր կարող ձևակերպվել նաև շահագործման

ընդունող հանձնաժողովի ակտ և նույն գյուղապետի կողմից տրվեր շահագործման փաստագրման ակտ:

Նույն գրության համաձայն՝ տեղում կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ ներկայումս ջրանցքը սալերով ծածկված չէ, խողովակաշարը մեկուսացված չէ, իսկ ջրանցքի երկարությամբ որոշ հատվածներում առկա են կոտրված վնասված երկաթբետոնյա ծածկի սալեր, մի քանիսն էլ ծածկված են պոլիէթիլենային թաղանթով և հողաշերտով,

ժ) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն սույն թվականի մայիսի 17-ի գրությամբ հայտնել է, որ ավարտված շինարարական օբյեկտ Կայանը շահագործման ընդունող հանձնաժողովի 2009 թվականի մայիսի 27-ի ակտը չի համապատասխանում 2009 թվականին գործող «Քաղաքաշինության մասին» օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի №626Ն որոշման պահանջներին՝ մատնանշելով մի շարք անհամապատասխանություններ,

ժա) Կայանի շինարարության ավարտը հավաստվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրաձոր համայնքի (ներկայիս Ամասիա համայնքի) ղեկավարի կողմից 2009 թվականի հունիսի 2-ի №01 շինարարության շահագործման փաստագրման ակտով, Հանձնաժողովը, սույն թվականի մայիսի 21-ի №ԱԲ-1060ի գրությամբ Դիմողների ներկայացրած՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2019 թվականի մայիսի 13-ի և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի 2019 թվականի մայիսի 17-ի №03/18/2793-19 գրությունների պատճեններն ուղարկել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարին՝ դրանց վերաբերյալ վերջինիս դիրքորոշումը ստանալու նպատակով: Հանձնաժողովի՝ նշված գրությանն ի պատասխան համայնքի ղեկավարը սույն թվականի մայիսի 31-ի №0-25/208-19 գրությամբ հայտնել է, որ իրոք Կայանի կողմից օգտագործվող դյուկերը և ջրանցքի հատվածը գտնվում են Ամասիա բնակավայրի տարածքում, որտեղ շինարարական աշխատանքներ իրականացնելու համար Ամասիայի նախկին գյուղապետարանի կողմից շինարարության թույլտվություն չի տրվել և շինարարության շահագործման փաստագրման ակտ չի կազմվել,

ժբ) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարը սույն թվականի մայիսի 24-ին Հանձնաժողով մուտքագրված նույն ամսվա 16-ի գրությամբ

հայտնել է, որ Կայանի կառուցման նախագծով նախատեսված՝ Աջափնյա ջրանցքի բետոնյա հատվածի ծածկման երկաթբետոնյա սալերի, ինչպես նաև դյուկերի վերազինման վերաբերյալ Ամասիայի նախկին գյուղապետարանը շինարարական օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովի՝ ավարտական շինարարական ակտ, ինչպես նաև շինարարության շահագործման փաստագրման ակտ, Ամասիայի խոշորացված համայնքի փաստաթղթերի ընդունման հանձնաժողովին չի հանձնել: 2009 թվականի հունիսի 2-ի շինարարության շահագործման փաստագրման ակտով հաստատված, Կայանի կառուցման նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների կատարման փաստի վերաբերյալ ևս Ջրաձորի նախկին գյուղապետարանից Ամասիա խոշորացված համայքնի ընդունման հանձնաժողովին որևէ փաստաթուղթ չի հանձնվել,

ժգ) Դիմողները սույն թվականի մայիսի 29-ի գրությամբ, վերստին անդրադարձել են Ընկերության կողմից ջրային համակարգերի օգտագործման իրավունքը հավաստող պայմանագրի իրավաչափությանը, պնդել են, որ Կայանի շինարարության աշխատանքների ավարտի մասին ներկայացվել է խեղաթյուրված տեղեկատվություն, Կայանը շահագործվել է «Քաղաքաշինության մասին» օրենքի կոպտագույն խախտումով: Դիմողները մեջբերել են «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի «ա» կետը, ինչպես նաև հայտնել իրենց ենթադրությունն առ այն, որ սույն վարչական վարույթի շրջանակում քննարկվող փաստական հանգամանքները ենթակա են քննարկման նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի կիրառման տիրույթում,

ժդ) Ընկերությանը №0322 լիցենզիայի տրամադրման պահին գործող խմբագրությամբ Կարգի №3 հավելվածի համաձայն էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի տրամադրման համար հայտատուի կողմից ներկայացման ենթակա փաստաթղթերն են՝ լիցենզավորվող ընկերության կանոնադրության և պետռեգիստրի վկայականի պատճենները, տեղեկություններ բաժնետերերի և բաժնետոմսերի մասին, լիցենզավորվող գործունեության աշխարհագրական տարածքը, լիցենզավորված գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ հիմնական և վարձակալված միջոցների ցանկը, շինարարության ավարտը հավաստող փաստաթուղթ, պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթ,

ժե) «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել լիցենզիա ստանալու

համար ներկայացված փաստաթղթերում լիցենզիան տալու համար էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն հայտնաբերելու դեպքում, և եթե լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման հետևանքով պատճառվել է ծանր վնաս,

ժզ) «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, կետերով նախատեսված հիմքերով լիցենզիայի գործողությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, դադարեցվում է դատական կարգով՝ լիցենզավորող մարմնի դիմումի համաձայն,

ժէ) №0322 լիցենզիայի պայմանների 13-րդ կետի համաձայն՝ Ընկերության կողմից Կայանի կառուցումը և շահագործումն իրականացվում է համաձայն էլեկտրակայանի նախագծային փաստաթղթերով նախատեսված սխեմայի՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

ժը) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ՝

- Դիմողների պնդմամբ, Ընկերության կողմից «կեղծված և (կամ) խեղաթյուրված» որակվող փաստաթղթերից միայն Կայանի շինարարության ավարտը հավաստող փաստաթուղթն է հիմք հանդիսացել №0322 լիցենզիայի տրամադրման համար, հետևաբար մյուս փաստաթղթերին (այդ թվում՝ ջրօգտագործման թույլտվությանը, ջրատարի վարձակալման պայմանագրին կամ ջրատարին միացման թույլտվությանը) առնչվող Դիմողների պնդումները սույն վարույթի շրջանակում քննության առարկա դառնալ չեն կարող,
- որպես Կայանի շինարարության ավարտը հավաստող փաստաթուղթ, Ընկերությունը ներկայացրել է ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի 2009 թվականի մայիսի 27-ի ակտը և համայնքի ղեկավարի 2009 թվականի հունիսի 2-ի շինարարության շահագործման փաստագրման ակտը, որոնցով իրավասու հանձնաժողովի և համայնքի կողմից փաստվել է Կայանի պատշաճ շինարարության ավարտը,
- Կայանի կառուցման նախագծով նախատեսված աշխատանքների մի մասի՝ ջրանցքի բետոնյա հատվածի ծածկման և դյուկերի վերազինման աշխատանքների ավարտը ենթակա էր հավաստման ոչ թե Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրաձոր, այլ Ամասիա համայնքի ղեկավարի կողմից, քանի որ դրանք գտնվել են այդ բնակավայրի վարչական տարածքում, այսինքն Ընկերության կողմից №0322 լիցենզիայի ստացման

համար, որպես Կայանի շինարարության ավարտը հավաստող փաստաթուղթ պետք է ներկայացվեր նաև Ամասիա համայնքի ղեկավարի կողմից տրամադրված շինարարության ավարտը հավաստող փաստաթուղթ, ինչը, սակայն, չի արվել՝ ըստ էության խեղաթյուրելով լիցենզիա ստանալու համար էական նշանակություն ունեցող՝ Կայանի կառուցման աշխատանքները նախագծին համապատասխան ավարտելու վերաբերյալ Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը, ինչը հիմք է «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով №0322 լիցենզիայի դադարեցման համար: Ընդ որում նույն հոդվածի համաձայն՝ նշված հիմքով №0322 լիցենզիայի դադարեցման իրավասությունը վերապահված է դատարանին,

- ներկայումս Ընկերության կողմից Կայանի շահագործումն իրականացվում է էլեկտրակայանի նախագծային փաստաթղթերով նախատեսված սխեմային ոչ համապատասխան: Մասնավորապես, պետական իրավասու մարմնի կողմից փաստվել է, որ ներկայումս համապատասխան ջրանցքը սալերով ծածկված չէ, խողովակաշարը մեկուսացված չէ, որոնք համարվում են №0322 լիցենզիայի պայմանների 13-րդ կետի խախտում: Միաժամանակ, հարկ է փաստել, որ նման պայմաններում համապատասխան ջրանցքի և խողովակաշարի շահագործումը կարող է վտանգել այդ համակարգի հուսալիությունն ու անվտանգությունը՝ հանգեցնելով նաև դրանց միջոցով իրականացվող մի շարք բնակավայրերի ոռոգման խաթարման,
- Դիմողների կողմից մատնանշված՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 2-րդ մասի «ա» կետով նախատեսված կարգավորումը սույն վարչական վարույթի շրջանակում կիրառելի չէ, քանի որ այն վերաբերում է կառուցման ժամանակահատված ներառող արտադրության լիցենզիա ունեցող անձանց, որպիսին Ընկերությունը չի հանդիսանում: Կիրառելի չէ նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածը, մասնավորապես՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերի ընդհանուր նորմի և հատուկ նորմի միջև կոլիզիաների դեպքում գործում է հատուկ նորմը: Տվյալ դեպքում Դիմողների կողմից մատնանշված հիմքով (կեղծ կամ խեղաթյուրված տեղեկությունների ներկայացում) լիցենզիայի դադարեցման վերաբերյալ կարգավորումները ամրագրված են «Լիցենզավորման մասին» օրենքով՝ հատուկ նորմերով, որոնք էլ ենթակա են կիրառման սույն վարչական վարույթի շրջանակում,
- Դիմողների կողմից «կեղծ» որակված փաստաթղթերի իսկության ստուգումը դուրս է հանձնաժողովի իրավասությունների շրջանակից, և դրա կեղծ լինելու հանգամանքը՝

№0322 լիցենզիայի տրամադրման գործընթացի օրինականության վերաբերյալ հարցերի քննության ընթացքում, ենթակա է գնահատման №61211918 քրեական գործի շրջանակում,

- Ընկերության՝ լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման հետևանքով ծանր վնաս պատճառվելու վերաբերյալ Դիմողների կողմից հիմնավորումներ չեն ներկայացվել, ավելին՝ վերջիններից «ՖԵՆՀԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության №0433 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ 2014 թվականի սեպտեմբերի 16-ին ներկայացրած հայտը մերժվել է, և էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա չի տրամադրվել, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասը, 11-րդ մասը և «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. №0322 լիցենզիայի պայմանների 13-րդ կետի խախտման հիմքով կասեցնել լիցենզիայի գործողությունը՝ մինչև խախտման պատճառի վերացումը:
2. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Հանձնաժողովը «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով №0322 լիցենզիայի գործողության դադարեցման համար դիմում կներկայացնի Հայաստանի Հանրապետության վարչական դատարան,
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից 15 օրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմողներին և Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
5 հունիսի 2019թ.